ԱՐԵՒԵԼՔ

Ամիսը երկու անգամ կ'ելլէ, մէկին եւ տասնըհինգին, ամեն մէկ թիւը երկու թերթ ութածալ ։

ԳԻՆ ՍՏՈՐԱԳՐՈՒԹԵԱՆ

ԲԱՐԻԶ	ՕՏԱՐ ԵՐԿԻՐ
ՏԱՐԵԿԱՆԸ . . . . . 20 ֆ .	ՏԱՐԵԿԱՆԸ . . . . . 26 ֆ.

Ինչ որ շարագրութեան կը վերաբերի առ Ս. Ոսկանեան առաքելու է (rue de Seine, 21) ։

Ձեռագիրները ետ չ'են տրւիր, եթէ չը տըպւին, կ'այրըւին ։

Անանուն յօդուած մը չը հրատարակւիր · ֆրանսայի օրէնքի դէմ է ։

Անվճար նամակը կամ ծրարը կը մերժըւի ։

ԳՈՐԾԱԿԱԼՔ

ՊՕԼԻՍ . . . . . Յարգի Ա. Պէրպէռեանի Գրատունը
ԻԶՄԻՐ . . . . . Յարգի Արիփարեանի Գրատունը ։
ՅԵԳԻՊՏՈՍ . . . . . Յարգի Տ. Գասպարեան Եզրարք ։

PARIS. — IMPRIMERIE WALDER, RUE BONAPARTE, 44.

ԱՐԵՒԵԼՔ

ՀԱՆԴԷՍ ԿԻՍԱՄՍԵԱՅ

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ · — ԹԻՒ Դ·

15. ՕԳՈՍՏՈՍ 1855.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՎԵՆԵՏԻԿԻ ՎԱՆՔԻՆ ՆԵՆԴՈՒԹԻՒՆԸ	Ս. ՈՍԿԱՆԵԱՆ.
ԹՇՈՒԱՌՈՒԹԵԱՆ ՀԱՌՈՋԸ.	ՀԱՐՄԱՅ .
ՔՈՌՆԷՅԼ.	ՓԼՇՏԻՄԱԼՃԵԱՆ,
ԳԻՇԵՐԱԳԷՄ ՄԻԱԲԱՆՈՒԹԻՒՆ ՄԸ.	ՀԱՐՄԱՅ .
ԱՅԼԵՒԱՅԼՔ	—
ՈՒՐԻՔԱ	—

ԲԱՐԻԶ·

1855

ԱՐԵՒԵԼՔ

ՀԱՆԴԷՍ ԿԻՍԱՄՍԵԱՅ

ՄՈՒՐԱՏԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

ՎԵՆԵՏԻԿԻ ՎԱՆՔԻՆ ՆԵՆԳՈՒԹԻՒՆԸ

ԵԹԷ հայ մը, նաև օտարական մը, ուշի ուշով և անկողմնապահ միտքով կարդայ Մուրատեան Սամուէլ Մկրտիչ բարեբարին կտակը չորս բան կը նշմարէ հոն և կը համոզուի թէ,

Ա. Մուրատեան հրիտակը հայ ազգին եղած է։

Բ. Մուրատեան վարժարանը հայազգի որբ և աղքատ տղաքներու կրթութեան համար հաստատեալ է։

Գ. Կրօնական նպատակ մը չ'ունի, ամէն ուսմունք սովրելու համար է այն վարժարանը։

Դ. Վենետիկի վանքը միայն միջնորդ է կամ մատակարար։

Այս չորս հետևութիւնը կտակին տառերու և ոգիին յար և նման ըլլալով, մէկը չը կրնար յանդգնիլ ուրիշ մեկնութիւն մը տալ անոր

և այն հրիտակով կանգնեալ վարժարանը ուրիշ համբայի մը մէջ դնել։ Վասն զի վաւերական կտակ մը նուիրական բան է, և այնպէս համարեալ է հին և նոր աղգերու մէջ. անոր տառերը, կէտերը անգամ, անայլայլակ են. մարդկային օրէնքը կը հակէ անոր վրայ, և արդարութիւնը ինաւ չը նեղէր որ բարեբարի մը յետին կամքը չը կատարուի կամ թերի կատարուի։

Եթէ կտակ մը տղայական խաղալիկ մը ըլլար կամ անհիմ հրաման մը ապագային համար, մարդկային ազգը արդարութեան հովանիին ներքեւը չէր գներ անոր աւանդը, և բանիայն չէր խոստանար աշխարհէ Հլլոդին թէ ինք է պահապան անոր լիապէս ի գործ դրելուն։ Երբ մարդ մահուան և յարութեանութեան անովը գրաւեալ, և տեսիլներէ սրտարեկ ամէն բան կը մառնայ, վայրկեան մը կը հանդարտի, կ'ամչնալի և երկրային հոգերով կը համակի ու դողուն ձեռքով իր կամքը կը գրէ, սերը կը յայտէ, սիրտի գաղտիքը կը դրոշմէ, համոզեալ է թէ այն դրոշմը չը պիտի ապականուի և իր կամքը ուրի տակ չը պիտի ընկայ. եթէ ոչ՝ գրելը ունայն բան մը կը համարի, և իր անունով կնքելը հիմնովին անօգուտ. հազիւ թէ թերեմով յայտնելը արժանի կը սեպէ։

Կտակ գրելը կամ հրիտակ թողուլը այն օրէնքէ առաջ կը գայ թէ մարդ իր հարստութեան տէր է, և թէ ինչպէս ուզէ կրնայ գործ ածել իր հարստութիւնը. ուրեմն հրիտակ մը մեռեալ կենդանիի մարթին չը նմանիր, և զանոգին չ'ըլլար. տէր, ժառանգ ունի և արդարութիւնը ամէն բան այնպէս կարգի կը դնէ իրր թէ հրիտակատու ոգին դեռ կենդանի և նեկայ ըլլայ մարդկային ընկերութեան մէջ։ Ճշմարտիւ, եթէ լաւ մը քննէ մէկը, ժառանգը անգամ ինքնագլուխ տէր չէ հրիտակին. եթէ օրինաւոր և վաւեր պայմաններ կան, հարկ է թէ այն պայմանով ժառանգէ, եթէ ոչ ժառանգաւորի երաւունքը կը կորուսանի, իրրև նենգաւոր ամէն բանէ կը զրկուի ու վատութեան պատանքէ ուրիշ բան չը ժառանգէր։

Զը կայ ազգ մը Եւրոպայի մէջ որ այս ընդհանուր և արդար իրաւունքը ուրանայ, չը կայ մարդ մը որ այս իրաւունքին դէմ դնէ. սիրտ մը, որքան և ապականեալ ըլլայ, խիղճ մը որքան և արատաւոր ըլլայ, կը հարկադրի, զոնէ երեսէն, կտակին միտքը և տառերը պաշտել. եթէ երախտագիտութիւնը չէ, զոնէ ամօթը կը բռնադատէ զանիկա որ ընական օրէնքին հետեւի, այսինքն մարդութեան ընդարձակ պարտքը կատարէ, և առելի հրէշ մը չը հա-

մարւի։ Ուսկէ կը հետևի թէ կտակը միշտ արձակ բան չ՚է, այլ շատ անգամ թէական. և թէութիւնը, եթէ կայ, կտակէն անբաժանելի է։

Մուրատեան կտակը արձակ է՞։ — Բնաւ ամենևին. թէութիւներ, որոշակի թէութիւներ ունի։ Ի՞նչ են այն թէութիւները։ — Վերը յիշեալ չորս պայմանը։ Ուստի հայ ազգը, որ ժառանգ է, և Վենետիկի վանքը որ է միայն մատակարար, կը հարկադրուին այն թէութիւները կատարել, մի առ մի, բառ առ բառ կատարել. եթէ ոչ հայ ազգը ժառանգութենէ կ՚ելլէ և վանքը մատակարարութենէ։

Հայ ազգը անիմանալի և աններելի անհոգութեամբ մինչև հիմա կը լռէ. քննենք ուրեմն և տեսնենք թէ ի՛չպէս Վենետիկի Վանքը վարւեր է այսպիսի ծանր պարագայի մէջ, և թէ իր մատակարարի կամ աւանդապահի սուրբ պարտքը կատարեր է։

Վենետիկի Մխիթարեան միաբանութիւնը (ի՛նչ միաբանութիւն) կ՚իմանայ չ՚իմանար թէ հայ բարերար և հայրենասէր մը անգին հրիտակ մը ըրեր է կտակաւ, և ահա անդէն շահասէր և վատ փափազով մը կը զրաւի. իր կողմէ մէկը կ՚առաքէ Հնդկաստան (բարեբաղդաբար վիճակը այն մեկին վրայ կ՚ըյնայ, վասն զի անորմէ ուրիշ ազգասէր մը չը կայ եղեր այն սեւերես կրօնաւորներու մէջ) որ այն գումարը ձեռք բերէ։ Գումարը շատ հեռու երկիր կը գտնըւի, զժուարութիւներ երևան կ՚ելլեն, դատ վարել, կուիլ կը հարկադրուի, շահելու յոյսը կը նուազի, և ահա միաբանութիւնը ամեն բան կը մոռնայ, ազգային սէրը և պարտքը կը խեղդէ իր սիրտի մէջ, և վատաբար յանձն կ՚առնու ետ քաշուիլ, դատը թողուլ, և իրեն համար գումար մը խնդրելով որբերու իրաւունքը վաճառել, ազքատներու համար եղած պարգևը մերժել, կտակը մատնել։ Ասկէ աւելի անարժան շահասիրութիւն մը կ՚ըլլայ մի՞։ Վանքին միաբան՝ յիշեալ միակ ազգասէրը, Հ. Սարգիս՝ իր համակրօն այլ ոչ համամիտ ընկերներու թելադրութեան ականջ չը դնէր, ճշմարիտ հայրենական սիրով և յարատև ջանքով կը շարունակէ իր պաշտօնը, բանտ կ՚երթայ, դատի կ՚ելլէ, կը տառապի, կը բողոքէ, կը կուի որ ազգային հրիտակը չը կորուսուի. վանքը քաջալեր տալու տեղ, անոր նամակով պատուէր կ՚առաքէ, կը խնդրէ, որ քիչ մը ստակով բաւականանայ, և միաբանութեան համար բան մը շորթէ և

ետ դառնայ. ասկէ աւելի թուլութիւն և ագահութիւն տեսնըւեր է մի՞ :

Ուրեմն Վենետիկի վանքը սկիզբէն կտակը կը նենգէ կամ նենգելու հրաման կը տայ :

Հայր Սարգիս նուիրակամ սիրով և անքայքայ հաստատութեամբ ամեն դժուարութիւներու դէմ կը դնէ, կը յաղթէ, դատը կը շահի, հրիտակը կ՚առնէ, այլ անով չը գոհանար, կտակին ամբողջ կատարումը կը խնդրէ տասուերեք տարւան շահը ուղելով Մուրատեան ընտանիքէ. Վանքը նորէն կը բռնադատէ զանիկա որ առած գումարովը գոհ ըլլայ, և ետ դառնայ. ասկէ աւելի մատնութիւն կ՚ըլլայ մի՞ : Տասուերեք տարւան շահը, այսինքն գրեթէ հրիտակին չափ գումար մը, մէջ կը խաղայ Մխիթարեան միաբաններու վատութեամբը : Արդ Մուրատեան կտակը յայտնի և անուրանալի կերպով կը պատւիրէ իր կտակակատարներու շահը աղգին տալ :

Ուրեմն Վենետիկի վանքը շահէն հրաժարելով կամաւ կտակը կը նենգէ

Հայր Սարգիսը դատաւորներու և Մուրատեան ժառանգներու խօսք կը տայ թէ Վանքը կը հաւանի տարւէ տարի կամ աւելի ևս, հաշիւ տալու և հրիտակին ուր երթալը մի առ մի նշանակելու : Վանքը իր իրաւասէր միաբանէն գումարը կ՚ընդունի, այլ անոր տըւած խօսքը կամ խոստումը չ՚ընդունիր, հաշիւ տալ չ՚ուղէր. եթէ այս անարգութեան կենդանի օրինակ մը չ՚է, մենք պատիւ բառին նշանակութիւնը չ՚ենք գիտեր : Հաշիւ տալ չ՚ուղէր Վանքը, ուրեմն հրիտակին եկամուտը կտակին յարմար չը գործածւիր :

Ուրեմն Վենետիկի վանքը կտակը կը նենգէ :

Հայրենասէր բարերարին որդին այսպիսի վատութեան մը վրայ բարկանալով կը բողոքէ, կը կասկածի թէ իր հօր հրիտակը անարժան կերպով կը վատնըւի, և ի դատ կը կոչէ բոլոր վանքը :

Աւստրիայի տէրութիւնը կը քննէ իր բողոքը, և կը վճռէ որ հաշիւ տըրւի, մինչև մէկ լումայի մը ուր երթալը յայտնըւի. Վանքը չը հնազանդիր. ուրեմն Վանքը օրէնքէ դուրս է, ուրեմն բանտի արժանի է : Եթէ մատակարար մը բանտ երթայ, ի՛նչ բանի համար ըլլալը ո՞վ չ՚իյտէ :

Ուրեմն Վենետիկի վանքը կտակը կը նենգէ :

Երկրի մը օրէնքէ դուրս մարդը, այն երկրի վրայ բանտէ ուրիշ բնակելու տեղի մը չ՚ունի. այլ Վանքը որ հաշիւ չ՚ուզէր տալ, բանտ երթալ ամենևին չ՚ուզէր. ընտրել հարկ կ՚ըլլայ։ Վանքը իր յամառ և ատելի կամքը յառաջ տանելու համար հոս ալ ազգին շահը կը մոռնայ, Իգալիայի մէջ հաստատեալ վարժարանը տակուվրայ կ՚ընէ, ազգին մեծ վնաս կը պատճառէ շատ ծախքեր ընելով, և ի վերջէ Աւստրիայի տէրութենէ կը հանէ, Բարիզ կը բերէ կը հաստատէ Մուրատեան Վարժարանը, ու կը կարծէ թէ ալ վախ մը չը կայ և թէ Ֆրանսա ապաւէն մ՚է անիրաւութեան։

Ժառանգը չը յուսահատիր, կը հալածէ նորէն իր հօրը կտակին թշնամիները, և յիշատակին մատնտուները։ Կը հասնի Բարիզ, յանուն արդարութեան վերստին կը բողոքէ, իդատ կ՚ելլէ և հասարակապետութեան գահակալը կը վճռէ որ հաշիւ տրւի։ Վենետիկի Վանքը հաշիւ չը տար և չ՚ուզէր տալ, ուրիշ քաղաք երթալ կը սպառնայ։ Ուրեմն հոսալ կասկածելի վատնում մը կ՚ըլլայ. ուրեմն Մուրատեան հրիտակին եկամուտը միայն որբերը չը կըրթէր, աղքատները չը վարժէր, Մխիթարեան կոկորդը ալ կը պարարէ կամ գոնէ անոր ուրիշ վայելքի մը կը ծառայէ։

Ուրեմն Վենետիկի վանքը Մուրատեան կտակը կը նենգէ։

Մեծն և Լուսանորոգ Մխիթարայ Թոռերը Վարժարանին ստակին կէսը երկու տարի անպտուղ կը պահեն, որ ըսել է կամ շահի չ՚են տար կամ շահը իրենք կ՚առնեն. կամ որբերու ստակը և իրաւունքը կ՚ուտեն, կամ Մուրատեանին կամքը չ՚են կատարեր. երկու կերպով մեղաւոր են այս արդար կրօնաւորները։

Ուրեմն Վենետիկի վանքը կտակը յայտնի կը նենգէ։

Մուրատեան կալուածները (յետին անկարգութեան) մէջ կըմնան մինչև այսօր, և Վարժարանը մտնող ելլող քանի մը վարդապետեր (1846-1849) շռայլութեամբ կը վարւին. շռայլութիւնը ստակով կ՚ըլլայ, յետին անկարգութիւնը թալլելէ կամ թալլել տալէ կը ծնանի։ Ո՞վ է այն շռայլը. ո՞վ է այն թալլողը։ Մխիթարեանը կրօնական մութ փիլոնով ամեն բան կ՚ուզէ ծածկել. ըսել է թէ այս ամենու տակը գո՛նէ կասկածելի բան մը կայ։

Ուրեմն Վենետիկի վանքը կտակը կը նենգէ կամ կը ներէ որ նենգըւի։

Քսան տարիէ ի վեր (անիրաւ մատակարութիւն) մը կը տեսնըւի

այս վարժարանի մէջ. ըսել է թէ մատակարարները անիրաւ են։

Ուրեմն Վենետիկի վանքը կտակը կը նենգէ։

Մուրատեան Վարժարանը եկամուտին համեմատ աշակերտ չառնէր, ազահօրէն կըմատակարարէ. ուսկէ կը հետևի թէ աւելորդը կամ կը վատնուի կամ կը պահուի. ուրեմն մատակարարը իր պարտքը չը կատարէր,

Ուրեմն Վենետիկի վանքը կտակը կը նենգէ։

Սկիզբէ ի վեր աշակերտները Պոլիսի (բաւական հարուստ մարդերու) զաւակ, և Մխիթարեաներու ազգական են եղեր։ Ուրեմն որբերու կրթութիւնը հարուստներու կը տրւի, ուրեմն աղքատը հրիտակին բարիքը չը վայելէր։

Ուրեմն Վենետիկի վանքը կտակը կը նենգէ։

Բուն կամ Լուսաւորչեան հայերէ ձրի աշակերտ չ'է առնուեր, և մինչև հիմա ստակով առնուող կամ Թոշակաւոր աշակերտները կարի սակաւաթիւ են. ըսել է թէ խտրութիւն կ'ըլլայ բարեբարին գրաւոր կամքին հակառակ։

Ուրեմն Վենետիկի վանքը կտակը կը նենգէ։

Վենետիկի Միաբանութիւնը գիրքով կը հրատարակէ, և Հիւրմիւզ անուն արբայ մը նամակի մը մէջ կը գրէ թէ Լուսաւորչեան հայերու տղաքը պայմանով կամ ինչպէս կ'ըսեն, դաշամբ կ'ընդունին Վարժարանի մէջ. կտակին մէջ պայմանի անունը, մէկ տառը, ստուէրը անգամ չ'երևար։

Ուրեմն Վենետիկի վանքը կը նենգէ, վատօրէն կը նենգէ կտակը։

Բոլոր Մխիթարեան միաբանութիւնը կը հրատարակէ, և Հիւրմիւզ անուն վանապետը գրով վկայութիւն կը տայ թէ հայ տղաքներու հռոմութիւն կը դաստիարակւի, թէ զանոնք հռոմէական ընելու կ'աշխատուի անդուլ անդադար, և թէ հռոմէական հրահանգով կը տագորուին անոնց Թարմ միտքը. որպէս զի անոնք ուղղափառ ըլլալէ ետև, երբ հայրենիքը դառնան, ուրիշ հայերը շահին և այսպէս հետզհետէ Հայերու այժմեայ դաւանութիւնը անհետ ըլլայ, և ..... ուրեմն կրօնական դարան մ'է այն և ոչ վարժարան. ուրեմն ուսումի ազատ դաշտ մը չ'է այն, այլ խիղճի սպանդարան. ուրեմն ազգային նպատակ մը չ'ունի այն, այլ կրօ-

նական շէնք է ի փառս և ի պատիւ Հռոմայ գահի ։ Կտակին ոգին և տառերը ասոր դէմ են ։

Ուրեմն Վենետիկի վանքը կտակը կը նենգէ ։

Եթէ բուն հայերը Հիւրմիւզեան վանապետի պայմանը չ՚ընդունին, և եթէ (ոչ առնու զոք ի նոցանէ), ինչպէս անամօթ երեսով կը գրէ, Մխիթարեան Միաբանութիւնը պիտի բռնադատուի հռոմէական ըսուած հայերու տղաքով աշակերտներուն թիւը լնուլ, որպէս զի հրիտակին եկամուտը ուրիշ բանի մը համար չը վատնըւի ։ Արդ հռոմէական հայերը ազգին ութսուներորդ մասը հազիւ թէ կան, ուրեմն Մուրատեան վարժարանը այս ութսուներորդ մասին համար հիմնեալ և հաստատեալ է, ուրեմն ազգային չ՚է. այլ կտակը Հայոց ազգ կ՚ըսէ և ոչ ութսուներորդ մաս ։

Ուրեմն Վենետիկի վանքը կտակը կը նենգէ ։

Վանքը կը դաւանի, Հիւրմիւզեան վանապետը կը վկայէ, բաբական պաշտօնեաները կ՚ընդունին, բաբը, Վատիկանեան պատգամը, ինչպէս կ՚ըսէ յետագէմ հայ լրագիր մը, կը վճռէ թէ Մխիթարեանք « իրբրև իրենց եղբարք կ՚ընդունին և կը ճանչնան զանոնք՝ զորոնք որ հռոմէական առաքելական տուրբ եկեղեցին իբրև իր որդիքը կը ճանչնայ. » ուրեմն մենք որ հռոմէական ըլլալու յարգը կամ անարգութիւնը չ՚ունինք, իրենց եղբարքը չ՚ենք, համահայր և համամայր ծնունդ մը չ՚ունինք, միազգի չ՚ենք. ազգութիւն չը կայ մեր մէջը, կրօն կայ. այսպիսի մահածին բաժանում մը մենք միտքով անգամ չ՚ենք ըներ և յաւիտեան ընելու չ՚ենք. ազգը կրօնէ վեր կը դնեմք. կրօնը կ՚ընդունիմք, այլ անոր գերի չ՚ենք ըլլար, կրօնը կը պաշտեմք, այլ ազգութիւնը անոր չ՚եմք զոհեր, կրօնը կը ճանաչեմք իբրև երկնային կապ, և ազգութիւնը իբրև երկրային յօդ, կապ մը, նաև երկնային, զմեզ չը կրնար կապել, փասն զի մարդ ազատ ծնած է ։ Մխիթարեանը այս ամենը չ՚ընդունիր, անգութ և արիւնարբու մատերով ազգի մը սիրտը երկուքի կը պատռէ և կը բաժանէ. այս բաժանումը կտակին մէջ չը կայ և կտակը այս բաժանումէ առաջ գրեալ է. ուրեմն Մուրատեան կտակը ծուռ կը մէկնըւի, ծուռ կը կատարուի ուրեմն ։

Ուրեմն Վենետիկի վանքը կտակը կը նենգէ ։

« Հայերը Յիսուսի Քրիստոսի ճշմարիտ եկեղեցիէն դուրս են »

Մխիթարեանները նեռս են. Հայերը զուրս են նաև Մուրատեան վարժարանէ, Մխիթարեանները նեռս մտեր կը տիրեն և կը գոռան « ոչ զոք առնումք ի ձէնջ ։ »

Ուրեմն Վենետիկի վանքը Մուրատեան կտակը անխիղճ կերպով կը նենգէ ։

Հիւրմիւզեանը իր վաստաբանի բերնով օտարազգի դատաւորներու, բազմաթիւ ունկնդիրներու առջև կը յանդգնի պոռալ և պնդել թէ Հ. Սարգիս « իմ տանս և (սեպհական) ստացուածքիս մէջ բռնաբար կը տիրէ կամ կը նստի » ։

Եթէ Մուրատեան վարժարանի երկրորդ հիմնադիրը բռնաբար կը նստի, հայու տղայ մը քնաւ իրաւունք չ'ունի հոն մտնելու, և եթէ մտնայ որդեգիրի պէս պիտի վարուի. հայ մը Մուրատեանի կտակը ճակատին վրայ գնելով կ'ուզէ ներս մտնել և ոչ որդեգիրի մը պէս ։ Մխիթարեանը իմ տունս է, կ'ըսէ, և զուռը կը հրէ անոր երեսին ։

Ուրեմն Վենետիկի վանքը կտակը կը նենգէ ։

Մխիթարեան Միաբանութիւնը վարժարանը և անոր տեղերը իր անունին վրայ առեր և գներ է ։ Մատակարարը այս իրաւունքը չ'ունի. և կտակը այսպէս չը տնօրիներ ։

Ուրեմն Վենետիկի վանքը կտակը կը նենգէ ։

Մխիթարեան Միաբանութիւնը երկու միլիոնի եկամուտով տաս կամ տաս և հինգ աշակերտ կ'ընդունի ձրի. և միայն չորս հազար ֆրանք ամսական սովորութիւն ունի առաքելու անոր տեսուչին 2,000,000 հրիտակը հարիւրին հինգէ կը բերէ 100,000 ֆրանք. ուրեմն 52,000 ֆրանք ի՞նչ կ'ըլլայ, ո՞ւր կ'երթայ, ո՞րու կ'երթայ, ի՞նչպէս կ'երթայ. մարդ չ'իյտէ ։

Ուրեմն Վենետիկի վանքը Մուրատեան կտակը կը նենգէ ։

Հիւրմիւզեան անուն Վանապետը վարժարանին հարկաւոր եղած ստակը չ'առաքէր, տեսուչին փոխանակողները կը մերժէ. ասիկա նեղութեան մէջ կ'իյնայ ի անդիէ ասդիէ օգնութիւն կը խնդրէ, զրեթէ կը մուրայ. ծանր վաշխով փոխ ստակ առնել կը բռնադատի. և ի վերջէ ճարը հատնելով կը պատրաստուի որբ և աղքատ տղաքը անկատար ուսումով (նշանակէ՛ աս) ետ դարձնել ։

Ուրեմն Վենետիկի վանքը կը նենգէ, կամաւ կը նենգէ, Մուրատեան կտակը ։

Մուրատեան վեհ բարերարին ժառանգը յուսահատելով անեռես Մխիթարեաններէ, բանիւ և գրով կը հաստատէ թէ, եթէ շուտ, եթէ ուշ, « Մխիթարեան կառավարութեան ներքև իր հօր յիշատակը պիտի կորսնցնի » ։ Ուրեմն Վենետիկի վանքը լաւ չը մատակարէր, վարժարանը քանդելու ետեւէ է, այս ըսողը Մուրատեան մ'է, ուրեմն,

Աղգային կտակ մը կը նենգուի. անմահ հայրենասէրի մը յիշատակը վտանգի մէջ է, հայաստանի աւերակներու քով նոր վիճակներ կը պատրաստուին, և որու ձեռքով, արդար երկինք. — Մխիթարեանի, այո՛ Մխիթարեանի մը ամենի կառաղութեամբը ։

Հիւրմիւզեանը կ'ըսէ « կամ այս վարժարանը տակուվրայ պէտք է ըլլայ, կամ մեր վանքը պիտի կործանի, ուրեմն, լաւ է որ վարժարանը ղոհ ըլլայ վանքին » ո՛վ Վատակ քու սերունդը դեռ մերազգին մէջ կը տեսէ եղեր. ուրեմն իրաւունք ունի եղեր այն ուշիմ երիտասարդը որ կ'ըսէ « Հիւրմիւզեանը կը մերուժանէ ։ »

Ուրեմն Վենետիկի վանքը կը նենգէ Մուրատեան կտակը ։

Մուրատեան վարժարանը բարին նուիրակներու այցելութեան ու կառավարութեան տակը կը դնէ Մխիթարեան Միաբանութիւնը ։

Ուրեմն Վենետիկի վանքը կտակը կը նենգէ ։

Հիւրմիւզեանը աշխարհական վարժապետներու տեղ, քահանայ դաստուեր կ'ուզէ կարգել. այս անիրաւ կարգադրութիւնը այնքան կտակին դէմ է որ նոյն վանապետը վախնալով յիսուսաբար աշխարհականի հագուստ տալ կը փափագի այն քահանաներու, որպէս զի չը հասկըցուի ։

Ուրեմն Վենետիկի վանքը կը նենգէ կամ կը դաւէ Մուրատեան կտակը ։

Հիւրմիւզեանը Բրոբականտայի և Հռոմայ զահին հաճոյ բան մը ընելու համար, Հռոմ եղած ատենը խօսք կը տայ Բարիզի ազգային վարժարանը վաճառել, և Հռոմի մէջ ուրիշ մը գտնել ։ Վանքը վարժարանի տեսուչը, բան մը չ'էն իմանար. անիկա զաղտնի խոսքեան փաստաբանի մը կ'ապսպրէ որ գնող մը գտնէ ։

Ուրեմն Հիւրմիւզեանը կտակը կը նենգէ ։

Հիւրմիւզեանը նամակով կը գրէ և կ'ենթադրէ թէ « ի Հռովմ իսկ թերևս պահանջեսցուք տալ հաշիւ. այլ ոչ դիւրագոյն ինչ

իցէ անդ ի Հռովմ տալ զայն քան այլուր » ։ Ուրեմն ԼՕԷ Հիւրմիւզեան վանտպետը ուրիշ տեղ հաշիւ տալ չ'ուզէր ըսելէ ԹԷ հաշիւ տալը դիւրին չէ Հռոմէ զատ ուրիշ քաղաքի մը մէջ ։ Արդ ԹուրքանուԹեան կանոնները մի և անայլայլակ են ամէն երկիր. ի՞նչպէս ուրեմն (դիւրագոյն) կ'ըլլայ Հռոմի մէջ. մի՞ ԹԷ կասկածելի Թիւ մը կայ, կամ ԹԷ.... ո՞վ, ՄխիԹարեանէ մը ուրիշ, քարուԹեան տակէ տուելի արիւնաբոյր նախատինք մը (outrage sanglant) ըրեր է ։

Ուրեմն Վենետիկի վանքը, իր աբբային բերնով, բարը իրեն համակամ կ'ընէ և կտակը կը ենեզէ ։

Եւ որովհետև Մուրատեան վարժարանը Հռոմ տարուի նէ « Սրբազանն ինքն յայց ի զպրոցս մեր եկցէ » կը գրէ Հիւրմիւզեանը, յայտնի է ԹԷ ասիկա բարին կամ բրոբականտայի հետ խօսքը մէկ ըրեր է որ հոն հերետիկոս մը չը գտնուի.... ։

Բարի, բրոբականտայի մրոբականտայի խօսք չը կայ կտակին մէջ ։

Ուրեմն Վենետիկի վանքը կտակը կը ենեզէ ։

Ասկէ զատ Հիւրմիւզեանը Մուրատեան վարժարանը տակու վրայ ընելու և Հ. Սարգիսը վանտելու տաենը, ամէն տեղ, ամենու առջև կը հրապարակէ ԹԷ Հռոմ այսպէս կ'ուզէ. ըսել է ԹԷ Հռոմին կամքը կը տիրէ կամ պիտի տիրէ հոն ։ Կտակին մէջ այսպիսի անլուր մատակարարի մը անունը չ'երևար ։

Ուրեմն Վենետիկի վանքը կտակը կը ենեզէ ։

Ուսկէ կը հանուի այս անուրանալի հետևուԹիւնը ԹԷ Մուրատեան ազգային վարժարանի բուն և էական մատակարարը Հռոմ է ։

Այս միտքէդ մի՛ հաներ սիրելի վերծանող ։

Կը մնայ ուրեմն ընտրել ԹԷ ի՞նչ իրաւունքով Հռոմ այս մատակարարի պաշտօնը առնել կամ հայու մը կտակը կապտել կը յանդգնի ։ Ուրիշ յօդուածի մէջ այս ալ կը քննենք, և շատմիտ և անարժան վանքին ցոյց կը տանք ԹԷ Թալլող Թալլողի չ'է մեր ժամանակը ։

ԵԹԷ Բազմավէպը ըսելիք մը ունի Թո՛ղ երևան ելլայ, ես եմ բոլոր վանքին ամբաստան և կը ստորագրեմ ։

Ս. ՈՍԿԱՆԵԱՆ

ԲԱՆԱՀԻՒՍԱԿԱՆ

ԹՇՈՒԱՌՈՒԹԵԱՆ ՀԱՌԱՋԸ ։

Ահա ուրիշ օր մ՚ալ թռաւ
Բնաւ չ՚իյտեմ ինչպէս եկաւ.
Արդե՞օք գիտեմ մի ո՛ւր կորաւ,
Անհետ է նա իբրև զնաւ ։

Արևելքէ ի արևմուտ
Իմ հէգ աչը կը նշմարէ,
Երկրի վրայ ահռելի մութ
Երկնի վրայ ամպ պատեր է ։

Մի թէ՞ ամպ է, մի թէ՞ խաւար
Իւր յիշատակ զարհուրելի,
Ես չ՚եմ գիտեր և չ՚եմ հաւտար.
Օրը թռաւ այն է յայտնի.... ։

Մինակ չը թռաւ ես այն գիտեմ
Իմ վիշտերէ իր հետը տարաւ
Մաս մը փտուն և ահագէմ.
Օր վշտատար գնա՛ բարեաւ ։

Կայ օր բարի և օր չար կայ
Կ՚ըսւի անդուլ շատ մարդերէ.
Զը տեսայ դեռ երկրի վրայ
Տարբեր օր մը սև օրերէ ։

Կ՚ըսւի նաև թէ սրաթև
Մեր վրայէ օրը արշաւէ,

Թէ իր ոտը է շատ թեթև,
Եւ կանգ մարդոյ վրայ չ'առնէ ։

Ինծի համար ահ թև նորայ
Շատ յամրաքայլ է և անգու
Ո՛հ իր ոտը իմ սիրտի վրայ
Մահաբոյր հետք միշտ կը թողու ։

Որքան թշուառ ինծի նման
Անոր կ'ըսէ գնա՛ բարեաւ ։
Նայէ մէյմը իր թեը լայն
Որչափ բեռներ ունի անբաւ ։

Այո՛ ծանր է իր ահեղ քայլ
Քանզի իր հետ միշտ կը տանի
Շատ ոգիներ հէգ անիծեալ
Որ յայս երկիր չ'ունին տեղի ։

Մի թէ՞ այլուր աշխարհ մի կայ
Թշուառներու. — ես չ'եմ գիտեր ։
Ուստի կ'ըսեմ աճապարեայ
Գնա՛ բարեաւ օր ծանրաբեռ ։

Այլ երկրի վրայ ոչ օր, ոչ ժամ
Եւ ոչ ամեր են անհամար,
Եթէ կ'երթան ես փառք կուտամ
Զի կը հրեն իս անդադար
Դէպ՝ իմ շիրեմ. սիրո՛ն կայան
Ուր օր մի ես պիտի պառկիմ ։
Քալէ՛ քալէ՛ օր անսգան
Քալէ՛ կ'ըսեմ որ ես հանգչիմ ։

Ի՞նչ է կեանքը. — օրերու շար,
Շար փշահիւս և անբերրի.
Այլ համբերէ չ'է այն անծայր
Կէսը անցայ, և չ'եմ հեռի
Իմ շիրիմէ. աչ իմ ահայ

Անդ նշմարէ անոր սև քար,
Երկար ատեն անկէ երկեայ
Թեպետ էի ես շատ թշուաւ ։

Զ'էի գիտեր թէ մարդ ի՛նչ է.
Զ'էի գիտեր թէ ի՛նչ է մահ .
Ո՛հ գայռալի կեանքը գուբ մ'է
Մարդ է դահիճ, դահիճ ազահ ։

Կը յուսայի ես օր յօրէ
Թէ ի վերջէ պիտի ծագի
Երանալի օր մը մութէ
Ի° ոգիս սիրով պիտի յագի ։

Ի նա՛նիր յոյս. բաղդ ես չ'ունիմ
Փորագիր կայ ճակտիս վրայ
Թէ ես թշուառ պիտի մեռնիմ
Ինչպէս թշուառ աշխարհ եկայ ։

Օր ժահաբոյր քալէ կ'ըսեմ
Մարդակերի մը միշտ ծառայ
Կամ սովաբեկ տեղ մը նսեմ
Անիծելով կճռել ակռայ.
Ապրիլ չ'է այն. ա՛ռ իս գնայ
Քու լոյսը իս կը չարչըրէ,
Տուայտի մէջ տե՛ս ի՛նչ եղայ.
Լոյս անողորմ կորի՛ր յերկրէ ։

Ե՛կու գիշեր, ե՛կու փութա՛.
Քու սև երեսը ես կը սիրեմ
Քու սև քողը ե՛կ ինծ շնորհեա՛
Որ իմ հիւղէ ես դուրս ելլեմ..... ։

Մարդը լաթով դատի հիմայ.
Թէ և ըլլաս առաքինի,
Թէ հընոտի է քու վրայ
Մարդ քու երեսը ա՛լ չընայի ։

Գիշեր գոնէ իս կը ծածկէ
Գոնէ գիշեր ինձ քուն կուտայ
Դու օր փայլուն ամենն գիւէ
Դու յիս տեղաս Եպեր և վայ ։

Գնա բարեաւ, գնա հեռու
Օր վշտակիր. երանի թէ
Իմ յետին օր ըլլայիր դու
Եւ թռէաք մեկտեղ յերկրէ ։

Այսպէս գոչէր թշուառ մարդ մի
Եւ մրագէմ գիշեր տակաւ
Կը ծաւալէր վերայ երկրի
Իր քնաբեր ծանր վերարկուաւ ։

Լռէ՛ հարուստ, լռէ՛ դաժան
Գետնի վերայ թշուառը ննջէ.
Հանգիստ քիչ մը թո՛ղ առնէ ան
Վիշտերը հոն են արթննայ նէ ։

Հեշտական դու լռէ՛, մաղէ.
Քունէ ուրիշ երկրի վերայ
Երանութիւն նա չը գիտէ.
Ո՜հ Երանի թէ չարթննայ ։

Թարգմանութիւն

ՀԱՐՄԱՑ ։

ՊԱՏՄԱԿԱՆ

ՔՈՌՆԷՅԼ.

Ծնաւ Պետրոս Քոռնէյլ 1606ին, Ռուանքաղաքին մէջ, Պետրոս Քոռնէյլէն, որ Ռուանի մէջ ջրոց և անտառաց տէրն էր, և Մարթա լը Բըզանէն։ Իւր ուսմունքները Ռուանի Յիսուսեան կրօնաւորաց քովը ըրաւ, և բոլոր այս ընկերութեան միշտ վերջի աստիճանի երախտագէտ զտնուցաւ։ Առջի բերան փաստաբան եղաւ առանց յօժարութեան և յաջողութեան։ Բայց պղտիկ առիթ մը իր վրայ բոլորովին տարբեր հանճար մը երևան հանեց, և ասոր պատճառը սէրն էր։ Իր երիտասարդ բարեկամներէն մէկը, նոյն քաղաքին օրիորդներէն մէկուն սիրահարեալ, զինքը անոր տունը տարաւ։ Նոր եկողը աւելի հաճոյ անցաւ քան զներկայացնողը։ Այս դէպքին հաճութիւնը Քոռնէյլին իր չճանչցած հանճարը զրգռեց, և այս թեթև նիւթին վրայ Մէլիթ (Mélite) անուն կատակերգութիւնը գրեց, որ 1625ին հրատարակուեցաւ։ Այս կատակերգութեան մէջ նոր տեսակ ոճ տեսնուեցաւ, և ամէն մարդ հասկըցաւ որ կատակերգութիւնը պիտի կատարելագործուէր և երբ սկսան այս նոր երևցած հեղինակին վրայ վստահութիւն ունենալ այն ատեն կատակերգուներու նոր ընկերութիւն մը կազմուեցաւ։

Ձեմք տարակուսիր որ ասիկայ շատերը չզարմացընէ, որոնք Քոռնէյլի առջի վեց կամ եօթը գրուածները իրեն այնքան անարժան կը զտնեն, որ կուզեն զանոնք իրեն զրքերէն հանել և բոլորովին մոռցնել տալ, բայց անոնք թատրոնի պատմութեան ծառայելէն զատ, Քոռնէյլի փառքին ալ կը ծառայեն։

Քոռնէյլի առջի կատակերգութիւնները, ինչպէս ըսինք, գեղեցիկ չեն, բայց ուրիշ որ և իցէ արտաքոյ կարգի հանճար մը զանոնք կարող պիտի չըլլար շինելու։ Մէլիթը երկնային խաղ մըն է թէոր Հարտի (Hardy) բանաստեղծին խաղերը ետքը կարգաս, որք անկէ անմիջապէս առաջ էին։ Մէլիթի մէջ, թատրը, առանց բաղդատութեամբ, աւելի հասկցուած է, խօսակցութիւնը աւելի աղէկ

արձուցած, շարժ մունքները աւելի լաւ առաջնորդած և տեսարանները աւելի հաճելի. մանաւանդ անոր մէջը ազնուական կերպ մը կայ, և համեստ մարդկան խօսակցութիւնը զէշ ներկայացուցած չէ, որուն Հառտին ոչ երբէք կրցեր է հասնիլ։ Ինչուան իր ատենը գրեթէ ստորին կատակերգութիւնը և բաւական տափակ ողբերգութիւնը հաղիւ ճանչցուած էր, և ամէն մարդ նոր ոճ մը տեսնելուն վրայ զարմացաւ։

Մելիթի վրայ ըրած դատմունքնին այն եղաւ, որ խաղը պարզ էր և խիստ քիչ դէպք ունէր։ Քոռնէյլ այս քննութենէն խիստ վիրաւորուած, Քլիդանտրը (Clitendre) շինեց, որուն մէջ խիստ թէրակատարութեամբ պատահարներ ցանուած կը տեսնուին, աւելի հասարակութեան ճաշակին վրայ վստահանալու, քան թէ իւր ոճը սրբագրելու համար։ Միւս չորս խաղերուն մէջ Քոռնէյլ նորէն իւր բնական ոճը ձեռք առած է, որոնք են Պալատին սրահը (la Galerie du Palais) Այրի կինը (la Veuve) Նաժիշտ (la Suivante) և Արքայական հրապարակը (la Place Royale)։

Քոռնէյլ իւր առջի վեց կատակերգութիւններուն մէջ իւր ուժը փորձելէն վերջը, ետևէ ետև հետևեալ գրքերը շինեց։

Մեռեալ, որուն մէջ գերազանց ողբերգու ըլլալը կը ցուցընէ։ Ծաղրելի երևոյթ (Illusion comique), անկանոն և արտառոց կատակերգութիւն։ Լը Սիտ, իւր սքանչելի ողբերգութիւներէն մէկը, որուն հրատարակուելէն ետև զաղզիոյ մէջ առակ եղաւ ըսել « Այս բանս Սիտին պէս աղուր է »։ Այս ողբերգութեան նիւթը Կիւյլօմ տը Քասդրօ, ոպանիացի հեղինակէն առաւ, Ռիշըլիեօ նախանձէ զրգռեալ այս ողբերգութիւնը դատապարտել տուաւ ճեմարանէն։

Հորասք կամ Ովիատիոսք (les Horaces)։

Սիննա (1), կամ Գրութիւն Օգոստոսի։

Բօլիէօքդ, որ վեհ եւ ազդու ողբերգութիւն է (2)։

(1) Սիննային համար կը գրեր Պալզաք Քոռնէյլին « Քու Սիննադ հեւանդները կ'առողջացնէ, այնպէս կ'ընէ որ անդամալոյծները ծափահար կըլլան »։ Նափոլէոն Առաջին շատ կըսիրէր Սիննան. կըպատմուի թէ օր մը պալատականներէն մէկը զարմանալով կայսերութեան ողբերգու բանաստեղծներուն ըրած 6000 ֆռանք պարգեւին վրայ, հարցուց անոր — « Ինչ կ'ընէիր, արքայ, եթէ Քոռնէյլ ողջ ըլլար — Քսան միլիօն պարգեւ կ'ընէի »։

(2) Քոռնէյլ Պարթեւաց եւ Հայոց վրայ շատ տեղեկութիւն ունէր, եւ այս Բօլիէօքդը Հայ սուրբ մըն է, որ Փէլիքս անանով Հռովմայեցի հայոց իշխա-

Բոռնէյլ այս ստոիճան կատարելութեան հասնելէն եարը սկսաւ գեղեցիկ ողբերգութիւններ և կատակերգութիւններ շինել, որոնց անունը միայն յիշելը բաւական սէպեմք, որոնց մէջ իր հանճարին նուագիլը զգալի կերպով կը տեսնուի (1) ։

Պոմպէոս Ստաբան (le Menteur), ուսկից եան Մոլիէր երևան եկաւ և կատակերգութիւնը վերջի աստիճան կատարելութեան հասուց. Ռոտոկին որ գեղեցկութեամբը Սինոմային հաւասարեցաւ ։ Յետոյ շինեց Թէոտոր, Հերակղիոս, Տօն Սանշ. Տարսիոն, Անտրոմէտ, Նիքոմէտ (2), և Վերդարիթ (Vertharite) ։

Անկէ վերջը Բոռնէյլ Թատրոնէն գանեցաւ, և Վերդարիթ խաղին յառաջաբանին մէջ դուրցեց որ պիտի եան քաշուի պատճառելով իր ծերութիւնը ։ Կան այնպիսի հանճարներ, որ ծերութեան ատենն ալ իրենց փայլուն թիւնը չեն կորսնցներ, Բոռնէյլի հանճարը ասոնցմէ մէկն էր ։ Քաշուելով Թատրոնէն Բոռնէյլ Նմանութիւն Քրիստոսի (Imitation de Jésus-Christ) ըսուած գիրքը ոտանաւոր Թարգմանեց, որուն մէջ Ցիսուսեաններէն առած դասերը իրեն շատ օգուտ ըրին ։ Այս գրուածքը շատ յաջողութիւն գտաւ, և վեց տարի Բոռնէյլ ուրիշ գրուածք չը հրատարակեց, բայց վերջապէս իր քաղքէ բարեկամին և սպասպանին գրգռութեամբը նորէն Թատրոն մտաւ, և հետ զհետէ Լեսոիւ, Ոսկեգեղմ (Toison d'Or),

նին ատենը, իր Նեարք անուն քրիստոնեայ բարեկամին ձեռք քրիստոնեայ ըլլալով, կը փափաքէր նահատակութեան, ինչպէս դնայ իրենց կուռքերը կործանեց, այնպէս որ Ֆելիքսի ճաքը հաւատած գինէքը մեռցնել տուաւ, իր Բոլին աղջկանը հետ, որ Բոլիէօքթի սիրահարեալ եւ քրիստոնեայ եղած էր ։ Կը փափաքէինք որ հայ բանաստեղծ մը նոյնն այս ողբերգութիւնը հայերէնի թարգմանէր նոր ոճով մը, վասնզի ինչպէս կը լսեմք, հեղինակ մը թարգմաներ եւ յետոյ այլեր է դայն ։

(1) Բոռնէյլի եղբօրորդին, Ֆոնթընէլ իր վարքը գրած ժամանակը, ուսկէ մենք ալ շատ բան քաղած եմք, իր շինած խաղերէն մեծ մասին վրայ երկայն խորհրդածութիւն կընէ, բայց դժբաղդաբար այս խաղերը հայերէն թարգմանուած չ'ըլլալնուն այս խորհրդածութիւնները զանց կանենք, եւ անուններն միայն յիշելով կը բաւականանք ։

(2) Ռոտոկինի եւ Նիքոմէտի մէջ ալ հայերը մէկ քանի տեղ յիշուած են, մանաւանդ երկրորդին մէջ, որ տեսարանը Նիկոմիդիոյ (Իզնիմիտ) մէջ կանցնի, խաղին գլխաւորը Լատոիս անուն Հայաստանի թագուհի մըն է, որուն բերանը այն չափ սպառնալիք կը դնէ Հռովմայեցւոց դէմ եւ այն չափ վեհանձն կը ներկայացնէ զայն, որ կը տեսնուի թէ Հայը ո՛րչափ հզօր եւ անահ են եղեր այն ատեն .....։

Սերթորիոս և Սօֆոնիսպ, Աժէղիլաս (Agésilas), Աթիլա (1) Ոթոն Պէրէնիս, Բիւլշէրի և Սիւրենա ողբերգութիւնները հրատարակեց։ Վիրջի իրկուքը իր հասակին արժանի գործեր են։ 1675ին Սիւրէնային խաղացուելէն ետև, Քոռնէյլ բոլորովին թատրոնէն քաշուեցաւ ինչուան իւր մահը։

Քոռնէյլ յիշեալ խաղերէն զատ, երիտասարդութեան ատենը շատ մ'ալ ուրիշ բաներ գրած է, որոնք բարեկամները որինակած և պահած էին, անկէ վերջը շատ մ'ալ թագաւորին համար երգեր շինած է, թէ իրեն յաղթութիւն մը շնորհաւորելու և թէ իրմէն շնորհք մը խնդրելու համար։ Իւր սիրած երկու հեղինակներուն Տը լա Ռիւ և Սանթէօյլ, խաղերէն մեծ մասը թարգմանած է։ Լատիներէն ոտանաւոր ալ շատ աղէկ կը շինէր։ Միշտ Արիստոտել, Օռաս, և Սէնէք կը կարդար, և իւր շատ գրուածներու մէջ անոնց կը հետևէր։

Քոռնէյլ մէկ եղբայր և երեք տղայ ունէր, անոնց մէ և ոչ մէկը իր ոգիին կայծը ունէին։ Մեռաւ 1684ին 74 տարեկան։

Քոռնէյլ բաւական երկայնահասակ և լեցուն էր, կերպարանքը խիստ պարզ և հասարակ։ Գծագրութիւնը բաւական հաճելի էր, քիթը մեծ, գեղեցկաբերան և հրալի աչուքներ, վառվռուն կերպարանք, գծագրութիւնը խիստ յայտնի, որ պատկերը շինելու խիստ յարմար կ'ուզար։

Հնչմունքը խիստ յստակ չ'էր, և իւր ոտանաւորները ուժով կը կարդար բայց առանց գեղեցկութեան։

Բնութեամբ խիստ և երբեմն կարծր կերևնար, բայց բուն դիւրութեամբ ապրող էր, բարի հայր, բարի ամուսին, բարի աղգական, զորովագութ և լի բարեկամութեամբ։ Իւր խոսուածքը զինքը բաւական սիրոյ կը տանէր, այլ երբէք հեշտութեան և մեծ կապակցութեան։ Ազատ և անիշխան ոգի մը ունէր, որով կարող եղաւ հին ատենի հռովմէական առաքինութիւնը նկարագրել, և անկարող իւր ստացաւածքը շատցընելու։ Գովասանքներ լսելէն ոչ երբէք կը հոգնէր, փառքի զգայուն, և ունայնութէնէ հեռի։ Շատ

(1) Պոալօ կըսէր եւ ամէն գրադէտ կըկրկնէ հիմայ.

Agésilas,
Hélas!
Attila,
Hola!

անգամ իւր սակաւագիւտ արդիւնքին վրայ կը տարակուսէր, և դիւրաւ կը հաւատար որ կրնայ ոսոխներ ունենալ ։

Ամիսոր՝ Քոռնէյլի գրուածոց գեղեցկութիւնը ուշիմացուեցաւ ։ Իրեն մէկ քանի երգերը մանաւանդ աշխարհիս առաջին ողբերգակ բանաստեղծներուն կարգն անցնելով, անմահական մարդոց քարին վրայ իւր անունն ալ գրոշմեցաւ ։

ՏԻԳՐԱՆ. ՓԷՇՏԻՄԱԼՃԵԱՆ.

ԱԶԳԱՅԻՆ

ԳԻՇԵՐԱԴԷՄ ՄԻԱԲԱՆՈՒԹԻՒՆ ՄԸ

Արևելքը պարտ իրեն կը համարի բոլոր ազգասէր հայերու ուջադրութիւնը հետազայ հատուածներու վրայ կոչել. վասնզի գիշերադէմ կրօնաւորներու խումբ մը Հայ ազգը թշնամանելէ, անարգելէ եաև, հիմա կը յանդգնի մինչև անմահ հայրենասէրի մը կտակը նենգել, և ազգային արդար իրաւունքը ոտքի տակ առնել ։

Պարսաւագիրք երես 98.

....« Ասօրուան օրս ամեն Մխիթարեանք երդում կ՚ընեն թէ՝

Ա. Հայք հերձուածող և հերետիկոս են.

Բ. Անոնց եկեղեցին երթալու հրաման չը կայ:

Գ. Հրաման չը կայ անոնց հետ հաղորդութիւն ընելու յաստուածայինս ։

Ատ երեք խնդրոյն վրայ իրենց սուրբ Աթոռին հետ միշտ և կատարեալ միաբանութիւն ունին. և աշխարհքիս վրայ անանունէն (Հասունեանէ) դատ մէկը չկայ անոնց ստերդում ըսող ։ Եւ ատ իրենց անկեղծութեանը մեծ և միակ հաւատարիմ վկայ են, իրենց դարուկէսի մէջ տպած բոլոր գրեանքնալ.... » ։

Անդ, երես 37.

....« Մխիթարեանք հայոց մանր տղաքը այն դաշամբ կ՚ առնեն ոչ

պզտիկ հասակէն ուղղափառ վարդապետութեամբ կրթեն և ուղղափառ մեծցընեն. որ այս սերմանքը իրենց մեծ օգուտ կրնայ ըլլալ հոգը ճշմարտութեան մէջ մնալու, կամ զայն ճանչնալու և դիւրաւ ընդունելու։ Բայց չմնան պիտի եղեր ամանք սովրացնուն մէջ. սուրբ աւետարանի սերմանացանին հունտերն ալ՝ ո՛րը ճամբան ընկաւ, ո՛րը ապառաժ քարի վրայ. բայց գիտէք որ պիտի չը մնան, ի՞նչու կ՚ընէք պիտի ըսէ։ Զէ. մենք անհանունին մարգարէական հոգին չ՚ունինք »։ Եւ անամօթ և անիրաւ հիղինակը մեկ անգամ հաստատելը բաւական չը սեպելով, երես 110ի մէջ կը կրկնէ այսպէս, « Մխիթարեանք հայոց մանր տղամարդը վարժարանին կ՚առնեն Լազարիսթներուն պէս (1) այս դաշամբ որ հոն ուղղափառութիւն պիտի սովրին, և անանկ ալ կը սովրեցընեն, կը կրթեն որ գոնէ պզտիկուց լսեն տոգորուին »։

Եէրուսալեմ Թիւ 10, 1854.

Վենետիկի Միաբանութիւնը անխաղ բարի մը կնիքով հաստատել տալէ առաջ կը հրատարակէ թէ « Հայ ազգին՝ որուն բարիքն ու օգուտն իրեն առանձին և միակ նպատակ է, մեկ մասը զժբաղդութեամբ Կաթուղիկէ Առաքելական Հռոմէական հաղորդութենէ անջատեալ կը գտնըւի, և անոր համար իրեն եղբարը կ՚ընդունի և կը ճանաչէ զանոնք՝ զորոնք որ Հռոմէական Առաքելական Սուրբ Եկեղեցին իբրև իր որդիքը կը ճանչնայ. և հայ հերձուածողաց մոլորութիւնը զատապարտելով կը զատանի թէ, անոնք Յիսուսի Քրիստոսի Ճշմարիտ Եկեղեցիին դուրս են և կը խոստովանին թէ երբեք պիտի չը դարձին ազգաթէլ, ու թէ գործով թէ գրչաձքով, թէ խօսքով, ջանալ որ ան մոլորեալները նորէն Յիսուսի Քրիստոսի մի և միակ փարախը դառնան, որուն միմիայն Հովուապետ, Գլուխ և Կեդրոն է Հռոմայ Քահանայապետը, Պետրոսի, առաքելոց իշխանին, յաջորդը »։

Վենետիկի վանքին բարութեան տրուած թուղթին մէջ։

« Մեր միաբանութեան պարտքն ըլլալով Հայազգի տղայոց դաստիարակութիւն տալ մասնաւոր վարժարաններու մէջ, կը յայտարարենք թէ ոչ երբեք անտիպ եղած ենք ամենեին հոգ և աշխատանք չը խնայելու, այսպիսի կերպոյն վախճանի մը հասնե-

(1) Ինչո՞ւ չ՚է յիսուսեանները պէս. Մխիթարայ հոգեւոր դայեակը յիսուսեանը չ՚է մի՞։

լու համար, ջանալով որ աշակերտաց միտքին մէջ տոգորենք (2) կաթուղիկէ հռովմէական հաւատոյ ամենամաքուր (ո՛հ) սկզբունքները։ Եւ որովհետև այս մեր ջանքը և ճգունքը, աստուծոյ ողորմութեամբը, յաջողութեամբ պստկուած ըլլալով, շատ մը մարդկանց նախանձը գրգռեր է, ու կը գրգռէ միշտ մեղի դէմ, այնպէս որ ասոր համար անգամ մեղադրանաց տակ ընկած ենք, ահա կը հաստատենք թէ մենք ոչ երբէք դէմ կեցեր ենք և ոչ դէմ կը կենանք տեղական Եպիսկոպոսաց որ և իցէ Հսկողութեանը. վասնդի անոնց կիյնայ իրենց հովուական իրաւասութեան իրաւունքովը իրենց վիճակին մէջ տրուած քրիստոնեական դաստիարակութեան վրայ հսկելը. և այս հսկողութիւնը անով ալ դիւրաւ կրնան կատարել որ մեր աշակերտները այն դպրոցաց գտնուած տեղերուն լեզուները շուտով կը սովրին, և թէ որ այս բանս բաւական վկայութիւն չը սեպուի անոնց մէջի բարեկարգութեանը, ամենևին չենք խորշիր ո՛ր և իցէ այցելութեան և քննութեան տակ իյնալէն՝ թէ առաքելական նուիրակին կողմանէ, և թէ ուրիշ ո՛ր և իցէ արտաքոյ կարգի իշխանութեան կողմանէ որ ուզէք տեղական Եպիսկոպոսաց սովորական իշխանութեանը վրայ աւելցընել. միայն թէ կը խնդրենք որ այս քննիչները այն ազգային եպիսկոպոսաց մէջէն չընտրուին որ մեղի հակառակ կուսակցութիւն և կեղրոն մը կը կազմեն »։

Վենետիկի միաբան Պոլիսի Մխիթարեաները կը հրպարակեն թէ,

.... Ով որ աշխարհքի օրինաց տեղեկութիւն ունի, և խելքը բանեցընէ նէ, ինքնիրեն պէտք է հետևցընէ, որ Սուրբ Ղազարու վանքին տպարանէն ելած ո՛ր և իցէ գիրք մը, որ և է հեղինակի անունով ըլլայ բոլոր Միաբանութեան կը համարի, և Աբբան է երաշխաւոր, թողթէ երբոր առանց անուան ըլլայ. վասնդի Սուրբ Ղազարու վանքին տպարանը ոչ է հասարակաց տպարան որ ամէն անձնական մարդ ուզածը տպէ. իսկ միաբանութեան անձ մը դուրս տեղ բան տպելու ըլլայ, ինքնագլուխ ըրած կ՚ըլլայ և զայն չը ճանչնար Աբբան և Միաբանութիւնը։

.... Վասն այնորիկ մենք ամենքս միաբան, նաև մեր Աբբային ու Միաբանութեան կողմէ կը բողոքեմք թէ » Պարսաւագիրը մերն է և թէ մենք կ՚ընդունինք զան առջի տառէ մինչև յետինը։

Այս ամենը ծանր խօսքեր են անտարակոյս, և, արգոյ մարդ մը,

(2) Այս բայի ֆրանսերէնը դնենք որ լաւ մը հասկըցի. Տոգորել Imbiber.

թող թէ ազգ մը, դիւրաւ չը կրնար կլլել զանոնք. այլ այս ամենը Մխիթարեաներու ինչ աշտիճանի մարդեր ըլլալը աւելի ակներև կը յայտնէ քանթէ հայերու նիւթական վնաս մը կըտայ, և որովհետև Բազմավեպը վատ և անարժան կերպով բանակռիւէ խոյս տուաւ, և Հռոմեական Պարգև անուն տետրակին առջև ահաբեկ դեռ կը լռէ; մեր պատիւը անարատ կը մնայ ամեն արդարասէր քննողի մը համար: Ուստի, իրենց դդում գլուխէ և սև ճակատէ մինչև ոտքը վատութեան քողով պատանքուելէ ետև, եթէ Մխիթարեանք լռէին, ա՛լ ըսելիք մը չը կար, և մենք ևս մեր կողմէ լռելը պատիւ կը համարէինք. վասնզի այսպիսի կրօնական միաբանութիւնը կ՚արհամարհենք, կ՚արհամարհէինք և պիտի արհամարհենք մինչև մեր յետին օրը, յետին ժամը, յետին վայրկեանը, մինչև մահուան սեամին վրայ և անդին.... : Այլ եկո՛ւ նայէ որ Մխիթարեանք երդում ըրեր են հանդարտ չը մնալու : Հիմա ա՛լ ըսելիք խօսք չը մնաց, և գրելու ուժը հատաւ. ուստի հարկ է որ գործքով իրենց երդումը կ՚ատարեն, որպէս զի սուտերդում չ՚երևան հռոմէական կրօնաւորներու առջև:

Չարակամ մարդու մը ձեռքէ շատ դէշ բան կը գայ, և անակնկալ ատեն մը անդարմանելի վնաս կրնայ տալ իր հակառակորդին. անոր համար արհամարհելը այսուհետև տկարութիւն կրնայ սեպուիլ մեր կողմէ, և լռութիւնը, համրութիւն: Մխիթարեանք պիտի լսեն թէ մենք ալ երդում ընել գիտենք, պիտի իմանան թէ մենք ալ ներքին համոզում մը ունինք, պիտի համոզուին թէ մեր երակներու մէջ ալ գործելու արիւնը պակաս չ՚է, պիտի տեսնեն թէ անմեղ և անօգնական ազգի մը նիւթական հարստութիւնը և երկրային իրաւունքը գործքով չը պիտի կրնան ոտքի տակ առնել ինչպէս որ իրենց թիւնալի լեզուով կարող չ՚եղան անոր պատիւը անարգել և փուտ գրիչով անոր ճակատը մրել և սևել: Մենք ալ բերան ունինք, Մխիթարեանք, և ձեր ականջը բաւական մեծէ և մեր ձայնը պիտի լսէ. մենք ալ երդում ընել գիտինք, ոչ գաղտնի յայտարարութեան մը մէջ, այլ յարևու և ամենուն ակներև. ո՛չ այս կամ այն մարդու մը, այլ ամեն ազգերու առջևը. ոչ քահանայի մը առջև ծունր դնելով, այլ յոտին և անահ կ՚երդնումք ի տապանակիրն Այրարատ և յաւերակս Հայաստան աշխարհի, գրով, խօսքով և գործով ձեր անիրաւ կամքին դէմ դինիլ, և մինչև մեր արիւնի յետին կաթիլը կըռուիլ ազգը ձեր ճիրանէ ազատելու համար:

ՀԱՐՄԱՑ:

ԱՅԼԵԻԱՅԼՔ

Սիէքլ (Siècle - Դար) *անուն օրագիրը, որ Ֆրանսայի ամենէ երևելի և առաջին լրագիրը կրնայ սեպուիլ. անծանօթ և չնչին մարդու մը գիրքը քննելու և դատելու ատենը, Հայ ազգին ծանր խօսքեր կ՚ըսէ : Դժուարիմանալի բան է թէ ի՞նպէս այս օրագիրը, որ հանրապետական և ազատասէր կը կոչուի, այս աշտիճան մոռնայ իր քաղաքական դաւանութիւնը և կոյր զկուրայն իրեն անծանօթ խնդիրներու մէջ նետուի ու գրեթէ արքայասէր լրագրի մը բերան բռնէ : Մ՚թէ՞ Սիէքլ մեր կասկածը կ՚ուզէ հաստատել, կասկած որ ունէինք իր վրայ երկար ատենէ իվեր, և բոլորովին համոզել գմեղ թէ իր բոլոր շարագիրները շահագէտ և անունով միայն հանրապետական են : Հիմա աւելի դիւրաւ կը յայտնուի թէ ի՞նչու Եօժէն Բելդան իր շարագրութենէ հեռացաւ, և թէ ինչո՞ւ հանրապետականք անոր վատութեան դէմ կը մրմնչեն :*

« Ամեն մարդ գիտէ, կ՚ըսէ ազիտաբար իր օգոստոսի 11 թիւին մէջ. թէ Հայերը, հրէաներու նման ոչ հայրենիք ունին և ոչ ազգ, և անոնց նման աշխարհի երեսը սփռեալ կը թափառին : Հայերը Ասիայի Սաւոյեարները և Օվերնիաները են (ce sont les Savoyards et les Auvergnats de l'Asie). *յօժարակամ կրօնական ուխտեր կը շինեն. և ո՞վ չը գիտէր թէ կրօնական կարգերը երկիր մշակելու յարմար են . . . . . »*

Ո՛վ որ քիչ շատ Ֆրանսերէն կըհասկընայ մէկէն կ՚իմանայ թէ այս բառերու տակը ի՞նչ յանդուգն նախատինք կայ. Սիէքլ պատճառ մը յառաջ չը բերէր, թշնամանելը միայն բաւական կը համարի. ի՞նչ դիւրին ճամբայ. մանաւանդ եթէ նախատուողը հայերու պէս անհոգ մարդեր են, որ մինչև հիմա իրենց պատիւը պաշտպանելու համար բան գրել և անիրաւութեան դէմ բողոքել չ՚են ուզեր : Ահա այսպէս, քրիստոնէութեան նահատակ ազգ մը հրէ այէ վար կամ գէթ անոր հաւասար կը դատուի. ահա այսպէս տէրութիւներ կանգնող և սրամիտ հայերը մուրող Սաւոյարի հետ կը բաղդատուին :

Օր մը պիտի գայ արդեօ՞ք որ մեր ազգը իր պատիւը ճանչնայ և պաշտպանէ . . . . . :

— Բարիզի համալսարանը սովորութիւն ունի, ամեն տարի, ընդհանուր քննութիւն մը ընել բոլոր լսարանները (lycée) աշակերտները հաւաքելու և դանդաղ նիւթեր առաջարկելով անոնց։ Այս տարի օգոստոսի 13ին այն քննութեան պարգևաբաշխի հանդէսը կատարուեցաւ Սորպոնի մէջ որ, ինչպէս և յայտնի է, դասատեղի է ամեն տեսակ բարձր ուսումներու։

Ժողովը կէսօրին սկսաւ, այլ ժամը իններին բազմաթիւ հանդիսատեսներ և աշակերտներու ընտանիքներ Սորպոնի կողմերը հաւաքուեր կը սպասէին անհամբեր սիրտով։ Ազգային զօրքի գումարտակ մը բակին մէջ բոլորուեր բարեկարգութեան վրայ կը հսկէր։ Ժամը տասն և մէկին զուռը բացուեցաւ և վայրկեանէ մը սրահը լի եղաւ խուռներամ բազմութեամբ։ Սրահը ամեն կերպով զարդարուն էր, և ազգային եռանդերկ զրօշը պատերու վրայ կը ծփար. պարզև տուելու զիրքերը, դափնեայ պսակները բեմին առջև շարուած կը մնային. ազգային զօրքի երաժշտութիւնը հայրենական երգեր կը հնչէր կրակոտ Ֆրանսական աշակերտներու մէջ տեղը, որք անով աւելի զգուեալ կ'եռային, կը գեռային և նստած տեղերնին կ'եփէին։ Կիները հագուած կապուած և օրիորդները սիրաբոյր զարդերով պճնեալ՝ սրահին երկու կողմը հեռաքրքիր տեսարան մը կը ներկայէին։

Կէսօրին Տ. Ֆորդուլ Ուսումի պաշտօնական պաշտօնական հագուստով և արարողութեամբ՝ իր առջևէ կը քալէին իրաւաբանութեան, գիտութեան բժշկութեան, գրագիտութեան և ասուտա ծաբանութեան վարժարանները՝ դասատուները՝ իր քովէ կ'երթային Տ. Վայլեան մարեշալ՝ պատերազմի պաշտօնական, և Տ. Պարոշ՝ Տէրութեան խորհուրդի (Conseil d'Etat) նախագահը, և յետոյ համալսարանի խնամակալ անդամները սրոնց մէջ ուրախ սիրտով նշմարեցին քառաբինի և հայասէր Տ. Լապրուսը, Սէնդ-Պարպ վարժարանին կառավարը։

Երբ Տ. Ֆորդուլը աթոռը նստաւ, պայազատ Նարպէոնը իր թիկնապահներով և Մայնեան զօրավարին հետ՝ ուրիշ դուռէ, ներս մտաւ, և սրահին հարաւային կողմը զատ զահուսրակի մը վրայ քաշուեցաւ։ Այս իշխանը հասարակ հագուստով էր, և միայն կայսերական նշանով կը զատուէր իր քովիներէ։

Ներկայ էին նաև շատ մը գիտուններ և ճեմարանի անդամներ, կամ ինչպէս Ֆրանսեանը հեղնարար կ'ըսեն քառասուն անմահներէ մէկքանին. այլ բազմութիւնը այնքան մեծ էր որ կարող չեղաւ մե-

զի այն անմահները լաւ մը նշմարել։ Անդրիրայ հոն պիտի ըլլայի յեռադէմ Կիլոն և իր արբանեակները, որ ամէն իշխանութիւն կորուսընելէ ետև, հիմա սկսեր են սուտումուտ դրութիւններ, կիսամէջ տեսիլներ պաշտպանել և ազատութեան դեմ ոռնալ։ Երբ ամէն հանդիսատես իր տեղը նստաւ Լէնիան անուն վարժապետը սկսաւ լատիներէն ճառ մը կարդալ որու նիւթն էր պարգևաբաշխի հիմնադրութեան պատմութիւնը։

Ճշմարտիւ չենք կրնար երևակայել թէ ինչո՞ւ երեք չորս տարի մոռնալէ ետև, լատիներէն ճառ կարդալը նորէն հաստատուեցաւ. հանդիսատեսներու մեծագոյն մասը կին, տղայ և այնպիսի մարդիկ են որ սկանչ ունին և ոչ լսեն . . . . . ։

Ինչպէս է, բազմութիւնը մէկ ժամի չափ յօրանջելէ և տապտակել ետև, սկսաւ իր Թմբրութենէ սթափիլ Տ. Ֆօրդուլին պղտի ճառը մտիկ ընելու համար։

Այս պաշտօնական իրեն նիւթ առեր էր դպրատուներու մէջ եղած դասերը որ առհասարակ տղաքներու դատում և քննութիւն տուիրեցընելու նպատակ ունին քանթէ տարիշ բան։ Ցեռոյ պաշտօնականը դէպի աշակերտներու դառնալով յորդոր տալաւ անոնց թէ ի՛նչպէս պէտք է այս դատումը ի գործ ածել ուսումէ ետքը ընկերական վիճակի մէջ մտնելու ատենը, և թէ ո՛րչափ մեր ժամանակը անբաւ նիւթեր պատրաստ ունի նորահաս միտքերը գրաւելու համար։ Վերջը Ֆրանսայի այժմեայ վիճակը քննելով, ուր մէկ դիէ հաշտութեան տաճարը կը կանգնի, ինչպէս կ'ըսէ Նաբոլէոն Գ. և մէկալ դիէ Արէսի զոռումը կը լսի, վերայ բերաւ շատ իրաւունքով թէ « Ֆրանսա մեր օրերու լուսաւորութեան ջահը և Թուրը կը կրէ հիմա » (la France porte le flambeau et l'épée de la civilisation moderne)։

Այս փոքրիկ ճառէ ետքը պարգևաբաշխը սկսաւ և Տ. Ֆօրդուլ առաջին եղող աշակերտներու պատակ և ընծայ տալը բաւական չը սեպելով, շնորհակալ կ'ըլլար, կը յորդորէր և հօր մը կաթոգին սիրով աշակերտներու երեսը կը պաղնէր։

Առաջին յաղթանակ գիտութիւններու. Սուայէ աշակերտը առաւ (Սէն-Լուի լսարանէ)։

Առաջին յաղթանակ տրամաբանութեան Տէտուզ աշակերտին տրուեցաւ (Պոնաբարտ լսարանէ)։

Առաջին յաղթանակ հարստաստանութեան. Հիւսոն աշակերտը առաւ, (Նաբոլէոն լսարանէ)։

Ա ելորդ կը համարիմք բոլոր միւս աշակերտներու անունը մի առ մի յիշել և անոնց պսակին թիւը շարել ։ Ո՛վ որ այսպիսի տեսարանի մը ներկայ չ՛է զոնըւեր չը կրնար երևակայել թէ ի՛նչ վեհ նպատակ մը ունի այս հանդէսը, ուր տէրութեան ամենէ երևելի պաշտօնաւորները ձեռքով, բերնով և գործով ամեն դիէ քաջալեր կը տան ուսումներու, ուր աշակերտները ազատութեան ոգին և վստահութիւնը կ՛առնեն, մինչև պայազատի մը քովը անահ աներկիւղ երենց օրախութիւնը յայտնելով պոռալով և գոռալով ։

Այս ամենը տեսանք և կը համարձակինք ըսելու թէ մենք միայն տրտում և կիսաւէր սիրտով ելանք սրահէն և անկէ հեռացանք ։ Հայրենիքի յիշատակը և աւերայրի պատկերը ո՞ւր արդեօք հանդարտ թող տըւեր է մեր միտքը որ հոս ալ ուրախութիւն մը զգայինք. Ասիայի հայ աշակերտներու ակնկոր լռութիւնը և յուսահատ երեսը մեր առջևը չ՛էի՞ն մի նկարւեր Ֆրանսեան տաքարիւն և ազատամիտ տղաքներու քովը. . . . . ։

— Էթիէն Պ. անուն ութսունամեայ ժամագործը, Ֆրանշ-Քոմթէ նահանգէն, սովորութիւն ունի քաղաքէ քաղաք, աւանէ աւան պտըտիլ ատրած ժամահարներ նորոգելու համար ։ Հին մարդ և հին արհեստաւոր. մեր ժամանակը ալ մէկը անոր երեսը չը նայիր և անոր չը դիմէր, ինչպէս կէս դար առաջ. անոր համար երկար ատենէ ի վեր թշուառը կը տառապի, հազիւ գործ մը կը գտնէ և իր ապրուստը կրնայ հոգալ ։ Քանի մը օր կայ Էթիէնը, Թէնս և Թէթել քաղաքներու ճամբային վրայ օթևանի մը մէջ կը դադրի, ուր երկար տարիներէ իվեր նորոգելու համար գոնէ տարին մէկ անգամ կը հանդիպի և իրմէ հին ժամացոյցները կը շիտկէ ։ Հիւրապէտը, որ իր ծանօթը և հաւատարիմ գնորդ (pratique) կը համարի, զանիկա այս անգամ ևս սիրով կ՛ընդունի, և անոր տառապանքը և վրայի զրգլեակը տեսնելով շատ կը վշտահարի ։ Այլ Էթիէն, որ հալևմաշ առողջութիւն մը ունի, հետևեալ օրը կը հիւանդնայ և անկոդինը կ՛իյնայ. բարի հիւրապէտը գթալով չ՛ուղէր զանիկա երեսի վրայ թողուլ, և քանի մը ծախք կ՛ընէ, բժիշկ բերել կը տայ որ դարման մը ընդունի ։ Ունայն ջանք. հիւանդութիւնը օրէ օր կը ծանրանայ և բժիշկը յոյսը կը կտրէ ։ Էթիէն ալ կը զգայ թէ մեռնելու մօտ է և թէ իր թափառական կեանքի ծայրը հասեր է. ուստի իր քովը կը կանչէ հիւրապէտը և կ՛ըսէ « Կը զգամ թէ պիտի

մեռնիմ. երկրի վրայ քեռորդիէ մը ուրիշ ազգական չ՚ունիմ որ այս ինչ.... տեղը կը բնակի. երբ յետին շունչը տամ, գրէ անոր և ազդ ըրէ. եթէ կամի քու ըրած ծախքը վճարել, անոր առաքէ այս թուղթը, իմ գաւազանը և զործիները, ուսկէ ուրիշ հրիտակ մը չ՚եմ թողուր : Եթէ չ՚ուզէր վճարել, թուղթը զու բաց և միւս ամենը ա՛ռ քեզ սեպհականէ » : Այս խօսքէ քանի մը օր ետքը թշուառ Էթիէնը կը մեռնի, և հիւրապէտը անոր քեռորդիին կը գրէ և ամեն բան կը յայտնէ : Քեռորդին իմանալով թէ հրիտակը գաւազանէ մը և քանի մը զործիներէ կը բաղկանայ չ՚ուզէր վճարել հիւրապէտին ծախքը. ասիկա տրտունջ մը չ՚ընէր և իր հիւրասիրութեան վրայ չը զղջար. այլ հետաքրքիր աչով գաւազանը դննելու ատենը կը տեսնէ թէ պտուտակ մը ունի այն. կը դառցընէ զան, կը բանայ, ի՞նչ տեսնէ մէջը. — չորս Նաբոլեոն ոսկի և 7300 ֆրանքի թուղթէ դրամ : Թշուառ օրինակ ագահութեան և արժանի տրիտուր հիւրասէր սիրտի մը :

ՎԻՊԱԿԱՆ

ՈՒՐԻՔԱ (1)

1795ին վերջերը, յեղաշրջումի ահը դադրեր էր, և հետ զհետէ մարդիկ իրար կը գտնէին. մարեշալուհիին ընկերութեան նշխարքը կը գային անոր բոլորտիքը կը հաւքըւէին և դառն սիրտով տեսայ որ օրէ օր անոր բարէկամներու թիւը կը շատնար : Իմ վիճակը ընկերութեան մէջ այնքան անյարմար էր որ, անոր նորէն շինելը և իր բնական կարգը առնելը շփոթէ մը ետքը, իս կը տանջէին և կը զգայի թէ անկէ դուրս կ՚ելլեմ : Ամեն անգամ, երբ կը տեսնէի թէ մարեշալուհիին տունը նոր բարեկամ մը կը գար, նոր տագնապ մը կը զգայի սիրտիս մէջ. երբ կը դիտէի նորեկներու կերպարանքին վրայ արհամարհովլի զարմանք մը, կը վրդովէի ու կը շփոթէի.

(1) Տես Արեւելք թիւ Ա. Բ. եւ Գ.

ինչու որ ստոյգ գիտէի թէ, իս տեսնելէ ետև, նորեկը պատուհանի մը քովը երթալով իմ վրայ կը խօսէր ուրիշի մը հետ, և թէ փափսուքի մը առարկայ կ'ըլլամ հաւքլուղ մարդերու մէջ։ Եւ յիրաւի, հետաքրքիր բան է գիտնել թէ, ի՞նչպէս սևուհի մը մարեշալուհիին մտերիմ ընկերութեան մէջ ընդունելի եղեր է։ Այս փափսուքի ժամանակը նահատակ կ'ըլլայի կը մնայի. կը փափագէի որ անտես զօրութիւն մը գար իս առնէր և իմ բարբարիկ հայրենիքը նետէր վայրենիներու մէջ, ուր գոնէ աւելի ապահով կ'ըլլայի քան թէ այս անողորմ ընկերութեան մէջ որ իս պատասխանատու կ'ընէր իր ձեռքովը ըրած չարիքին։

Մարեշալուհիին բարեկամներու անարգու (dédaigneux) կերպարանքը օրերով իս կը հալածեր, միշտ կը յիշէի զան, յերագի, յարթմընի կը տեսնէի զան ամեն բոպէ, և կ'երևակայէի թէ կը գար առջևս, իմ պատկերի նման, կը կենար։ Աւա՛ղ. այն ուրականերու պատկերը էր այն որով ես կը չարչըրւ էի։ Ան ժամանակ, ո՛վ աստուած, դեռ չ'էիր ինծի սովրեցուցեր, որ այս զաւժաբեր ուրուականերէ չը յաղթըւիմ և դեմ դնեմ, չ'էի գիտէր որ քեզ ապաւինելէ ուրիշ հանգստութիւն չը կայ։ Հիմա Շարլին սիրտի մէջ ապաւէն մը կը բնտռէի ես. անոր բարեկամութիւնը ինծի աղնիւ հպարտութիւն մը կը տար և անոր առաքինութիւնները զիս կը սփոփէին. կը հիանայի ես անոր վրայ, վասն զի ամենէ կատարեալ էակ մը կ'երևար ինծի։ Ուրիշ ատեն կարծեր էի թէ Շարլը եղբայրի պէս կը սիրեմ, այլ վըշ տահար և մարմնհար տանջըւելէս ի վեր, այնպէս կը թուէր ինծի թէ՝ պառաւեր եմ և հիմայ գրեթէ մօր մը պէս սէր ունիմ անոր վրայ։ Եւ յիրաւի. մայր մը միայն կրնար զգալ այն վառվռուն փափագը որ ունէի անոր երջանկութեան և յաջողութեան համար։ Ի բոլոր սրտէ կեանքս զոհելու պատրաստէի որ անիկա վայրկեան մը չը տրտմի։ Ես անորմէ առաջ կը տեսնէի թէ անիկա ի՞նչ ազդում կ'ընէր ուրիշներու վրայ թեպետև ինքը այնքան երջանիկ էր որ բան մը հոգը չ'էր ըլլար։ Այս զիւրիմանալի էր, ինչու որ վախնալու կամ ամչնալու բան մը իր վրայ չ'ունէր. և բան մը ալ իրեն այն յարատև անհանգստութիւնը չ'էր տըւեր որով ես կը տանջըւէի ուրիշներու խորհուրդը հասկընալու համար։ Իր ճակատագիրը յամենայնի դաշնակաւոր էր, և յամենայնի իմս, անյարիր և անյարմար։

Առաւօտ մը, մարեշալուհիին հին բարեկամներէ մէկը եկաւ և Շարլը նշանելու և կարգելու խօսք բացաւ։ Տը Թէմին օրիորդը հարուստ ժառանգուհի մը եղեր էր, թեպետ և դառն և անգութ

կերպով մը, վասն զի մէկ օրի մէջ բոլոր իր ընտանիքը կորուսեր էր կառափնառի վրայ (guillotine), և մեծ մօրաքոյրէ մը, որ ատենով կոյս հաւատաւոր էր, ուրիշ ազգական չ՚ունէր։ Այս կինը Տը Թէմին օրիորդի խնամակալ ըլլալէ եաքը, պարտ իրեն կը համարեր կարգել զանիկա և որչափ հնար էր շուտով, ինչու որ ութսունամեայէ աւելի ըլլալով կը վախնար որ կը մեռնի և օրիորդը միակ և անմոյթ կը թողու ընկերութեան մէջ։ Տը Թէմին օրիորդը տոհմի, հարստութեան, և կրթութեան ամեն կատարելութիւնները ունէր. տաս և վեց տարեկան էր և օրի պէս գեղանի (belle comme le jour)։ Ներելի չ՚էր տատամսիլ այսպիսի առիթ գտնելով. մարեշալուհին Շարլին հետ խօսեցաւ, որ առջի բերան քիչ մը վրդովեցաւ իր Թարմ հասակին նայելով և չ՚ուզեց կարգըւիլ, այլ քանիմը օրէ կամք ըրաւ մէյ մը Տը Թէմին օրիորդը տեսնել. տեսաւ զանիկա, և ալ չը կրցաւ դիմանալ, հաւանութիւնը տըւաւ։ Անախս Տը Թէմինը ունէր այն ամեն հրապոյրները որ Շարլի հաճելի էին, սիրուն էր բնականօրէն և այնպէս հանգարտ համեստութիւն մ՚ալ ունէր որ ամեն մարդ կը նշմարէր թէ այս ազնիւ առաքինութիւնը դիմակ մը չ՚էր իր վրայ։ Տը Թէմին տիկինը հրաման տըւաւ Շարլին որ կարենայ օրիորդը տեսնելու երթալ. ասով արդէն Շարլը բուռն կերպով սիրահար եղաւ, և ինծի մի առ մի կը պատմէր իր զգայութիւնները բորբոքիլը և ծաւալիլը։ Ես ալ անհամբեր սիրտով կը փափագէի տեսնել այս գեղանի Անախսը, որ Շարլին երջանկութեան համար սահմանուած էր։ Ի վերջէ օր մը Սէն Ժէրմէն եկաւ անիկա, և որովհետև Շարլը իմ վրայ խօսէր էր անոր, այս օրիորդի կերպարանքին վրայ չը ուեսայ այն խուզարկու և անարգու նայուածքը որ յարաժամ ինծի այնքան վիշտ կը պատճառէր։ Բարութեան հրեշտակի դէմք մը ունէր Անախս և ես անոր հետ խօսելու ատենը կը վկայէի թէ Շարլի հետ երջանիկ պիտի ըլլար և անոր պատանութենէ կասկածելու չ՚էր. ինչու որ, թեպետ և անիկա քսան և մէկ տարեկան էր, այլ աւելի հասակաւոր մարդու մը հաստատ միտքը ունէր։ Շատ մը խնդիրներ ըրաւ Անախս ինծի, վասն զի գիտէր թէ ի մանկութենէ հետէ կը ճանչնայի զինքը. ամենուն ալ պատասխան տըւի, և որովհետև անուշ էր ինծի բարի բարի խօսքեր ըսել Շարլի վրայ, խօսելէ չ՚էի դադրեր։

Հարսնիքը քանի մը ամիս ուշացաւ, ընտանի գործերը կարգի դնելու համար քիչ մը ժամանակ կորսըւելուն։ Շարլը կը շարունակէր միշտ տը Թէմինի տունը երթալու և յոլովակի կը պատահէր

որ երկու երեք օր Բարիզ մնայ իր սիրուհիին մօտ ։ Անոր հեռակայութիւնը իս վշտահար կ՚ընէր, և ես ինէ դժգոհ էի տեսնելով թէ իմ երջանկութիւնը Շարլինէն վեր կը համարէի. այս չ՚էր իմ սովորական սէրը և այսպէս չ՚էի սիրէր առաջ ։ Երբ Շարլը Սէն Ժերմէն կը գար այն օրը ուրախութեան տօն էր. ի՚նչ բանով և գրաւեր էր սիրուհիին քով, ինծի կը պատմէր, և եթէ տէսնէի թէ Անախսի սիրտի մէջ աւելի հաստատ կերպով տեղաւորւեր էր, անոր հետ ես ալ կը հրճւէի կ՚ուրախանայի ։ Սակայն օր մը ուղելով ինծի յայտնել թէ ի՚նչ կերպով իր ապառնի կինի հետ պիտի վարւի.

« Կ՚ուղեմ, ըսաւ անիկա, բոլոր անոր վստահութիւնը գրաւել, և բոլոր իմ վստահութիւնը անոր տալ. բան մը չը պիտի պահեմ անորմէ, իմ ամեն խորհուրդները պիտի գիտնայ, պիտի ճանչնայ իմ սիրտի բոլոր գաղտնի շարժումները. կ՚ուղեմ, Ուրիքա, որ իմ և Անախսի մէջը այն վստահութիւնը ըլլայ ինչ որ քու և իմ մէջը կայ » .

Այս ետքի բառերը սիրտս գէշ ըրին, և յիշել տուին ինծի թէ Շարլը չ՚էր գիտեր կեանքիս միակ գաղտիքը. ասա տեսնելով ես ալ փափագ չ՚ունեցայ զայն իրեն յայտնելու ։ Գամ քան զգամ Շարլին հեռակայութիւնը աւելի կ՚երկրննար. այնուհետև հաղիւ թէ քանիմը վայրկեան Սէն-Ժէրմէն կը մնար. ժամանակ չը կորուսընելու համար ձիով կը գար, և կէսօրէ ետև միշտ Բարիզ կը դառնար, անանկ որ երբեք երեկոները մեզի հետ չ՚էր մնար ։ Շատ անգամ մարեշալուհին կը կատակէր այս երկարատև հեռակայութեան վրայ. երանի թէ ես ալ անոր նման կարենայի կատակել ։

Օր մը անտառակին մէջ կը պըտըտէինք. գրեթէ շաբաթէ մը իվեր Շարլին երեսը չ՚էինք տեսեր. մէկէ ի մէկ տեսայ ծառաշարքի մը ծայրը, ուր մենք ժուռ կը գայինք, որ ձիու վրայ նստեր էր անիկա և արշաւասոյր կը վաղէր ։ Երբ մեր գտնըւած տեղին մօտ եկաւ, երիվարէն իջաւ ոստոստելով և սկսաւ մեզի հետ ճեմ առնուլ ։ Քանի մը բոպէ ընդհանուր կերպով խօսելէ ետև, ինծի հետ ետ մնաց և սկսանք առջի պէս իրարու խօսիլ ։ Առջի պէս, ըսի իրեն նշանաւոր ձայնով մը. « Ո՜հ ո՛չ, ըսաւ անիկա մեծագոչ պատասխանի մը տալով. ո՜հ ո՛չ. հիմայ շատ տարբերութիւն կայ. ի՞նչ ունէի քեզ ըսելու անատենը, բան մը կը զգա՞յի մը արդեօք. ինծի այնպէս կ՚երևայ թէ երկու ամիսէ ի վեր է որ կ՚ապրիմ միայն ։ Ուրիքա, երբեք չը պիտի կրնամ ըսել քեզի ինչ օր կը զգամ սիրուհիիս համար ։ Երբեմն այնպէս կը զգամ թէ հոգիս ինէ կ՚ելլէ անոր

հոգիին հետ կը միանայ։ Երբ անիկա ինծի կը նայի, ա՛լ շունչ չ՚եմ կրնար առնել. երբ կը կարմրի, կարծես թէ հով մը կը գայ և կը հրէ գիս որ երթամ անոր ոտերու առջևը ըյնամ և երկիրպագնեմ։ Երբ կը յիշեմ թէ քիչ օրէ այսպիսի հրեշտակի մը պաշտպանը պիտի ըլլամ, թէ անիկա իր կեանքը ինծի կը վստահի, իր ճակատագիրը իմ ձեռքը կը տայ, ա՛հ անատենը ես իմ բաղդով կը փառաւորիմ. գիտես արդեօք ինչեր պիտի ընեմ որ Անախս երջանիկ ըլլայ. իր հայրը և մայրը կորուս անիկա, հիմա ես պիտի ըլլամ երեն հայր և մայր, այր և սիրահար. անիկա իր առջի սէրը ինծի պիտի տայ, բոլոր իր սիրտը իմ սիրտի մէջ պիտի զեղու, մի և նոյն կեանքով պիտի ապրինք, և չ՚եմ կամիր որ, մեր երկար տարիներու մէջ, կարող ըլլայ ըսել թէ ապերջանիկ օրմը անցուց։ Ի՞նչ վայելք, Ուրիքա, ի՞նչ վայելք պիտի զգամ երբ պիտի տեսնեմ թէ անիկա մայր պիտի ըլլայ իմ զաւակներու, և թէ ասոնք Անախսի գիրկը, կեանքը պիտի ծծեն. ա՛հ իրեն նման անոնք ալ անուշ և սիրուն պիտի ըլլան։ Ինչ ըրի արդեօք, ո՞վ աստուած, որ այսպիսի երանութեան արժանի կ՚ընէս զիս ». Աւա՛ղ. ես նոյն վայրկեանի մէջ աստուծոյ անոր հակառակ խնդիր մը կ՚ընէի ու կ՚ըսէի — ի՞նչ ըրի արդեօք որ այսքան ապերանութեան մէջ կը տապակիմ։ Քանի մը բոպէէ ի վեր այս վառվռուն խօսքերը մտիկ կ՚ընէի անասելի զգայումով մը։ Տէ՛ր աստուած դու իսկ վկայ ես թէ Շարլին երանութեան վրայ չ՚էի ոխար, ընդհակառակը անով ես ալ երանութիւն մը կը զգայի. այլ ինչո՞ւ կեանք աբսիր Թշուառ Ուրիքային, ինչո՞ւ գերեվար նաւու մը վրայէ ազատեցաւ անիկա և հոն կամ իր մօր գերկը, մահ չը գտաւ։ Այն ժամանակ Աֆրիկէի ափ մը աւազը իր մարմինը պիտի ժածկէր և այս բեռը իրեն շատ թեթև պիտի ըլլար։ Ի՞նչ շահ եղաւ աշխարհի Ուրիքայի մը ապրելով, ո՞րու հոգն է։ Ինչո՞ւ համար դատապարտեալ է ապրելու. մի՞թէ, միայն, յարաժամ միայն մնալու և մէկէ մը չը սիրուելու համար էր այն։ Աստուած իմ և տէր մի՛ ներէր որ այսպէս ըլլայ, ա՛ռ երկրէ հանէ՛ զանիկա. մէկը Թշուառ Ուրիքային կարօտ չ՚է. չոր զշուխ չը՞ պիտի մնայ մը միշտ ընկերութեան մեջ։ Այն վայրկեանի մէջ այս սոսկալի խորհուրդը աւելի ամեհաբար իս պաշարեց, և առջի օրերէ աւելի կսկիծ մը զգացի։ Սկսայ ընկճիլ նուազիլ, ծունրերու վրայ ընկայ, աչերս խփան և կարծեցի թէ պիտի մեռնիմ։

Երբ Թշուառ հաւատուհին այս խօսքերը ըսաւ, իր ճնշումը

սկսաւ ալ աւելի շատնալ, ձայնը այլայլեցաւ, և քանի մը արտսուք իր թառամ այտերու վրայէ զետինը ընկան։ Ուզեցի բռնադատել զանիկա որ իր պատմութիւնը դադրէ, այլ անիկա ականջ չը դրաւ ինծի։ Այս բան մը չ'է, ըսաւ թշուառը, տրտմութիւնը ալ հիմա սիրտիս մէջ չը տևէր. անոր արմատը խլեալ է հիմա։ Աստուած իմ վրայ գութ ըրաւ. ինքը իր ձեռքով այն վիհէ իս ազատեց ուր ընկեր էի, զինքը չը ճանչնալու և չը սիրելուս համար։ Մի՛ մոռնար, սիրելի բժիշկ կ'ազաչեմ, թէ ես հիմա երջանիկ եմ. այլ աւա՛ղ, վրայ բերաւ անիկա, ան ատենը այս երջանկութիւնը չ'էի զգար։ Մինչև վերոյեշեալ ժամանակը, իմ վիշտերու համբերելով տարեր էի, սակայն միտքս վտանգի մէջ չ'էր և իմ վրայի իշխանութիւնը չ'էի կորուսեր։ Վիշտ իմ, որդի նման որ պըտուղը կ'ուտէ, սիրտէս սկսեր էր և իմ գիրկիս մէջ ապականութեան սերմը կը կրէի, թեպետև դրսէ բոլորովին կինդանի և առողջ տես մը ունէի։ Մինչև այն ատենը վիշտերէս ուժւոր էի. հիմա վիշտերը ինէ ուժւոր կ'ըլլային և կը յաղթէին։

Երբ ես ինքնամոռ ընկայ, Շարլը իր թևերու վրայ առաւ զիս և մինչև ի տուն տարաւ. հոս ամեն դարման ինծի տրւեցաւ, և ուշաբրեցայ։ Ինչ ատեն աչերս բացի տեսայ թէ մարեշալուհին անկողինիս քովը կայներ էր, և Շարլը իմ ձեռը կը բռնէր. երկուքը ալ ինքնին դարման տըւեր էին ինձի, և իրենց դէմքի վրայ այնպիսի անհանգիստ և տրտում գիծեր նշմարեցի որ հոգիս շարժեցին. զգացի թէ կեանքը նորէն ինծի կը գայ և սկսայ արտսուք թափել։

(Պիտի շարունակի.)

Համարատու Տըլէդր։

Paris. — Imprimerie Walder, rue Bonaparte, 44.